

Խ-1163-06.10.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Անկախ սույն հոդվածով սահմանված կարգավորումներից՝ Օրենսգրքի՝ համապատասխան հարկին կամ վճարին վերաբերող բաժիններով կարող են սահմանվել հարկային հաշվարկի և դրա կազմմանը վերաբերող առանձնահատկություններ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

- 1) 1-ին և 2-րդ մասերում «և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով,
- 2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու կամ հարկը (վճարը) ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագիրն) ուշ ներկայացնելու կամ եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման կամ եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ

վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Սույն մասի իմաստով նույնականացման քարտ ստանալու համար դիմել է համարվում նաև միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի թվային ծառայությունների հարթակի կամ բջջային հավելվածի միջոցով նույնականացման քարտ ստանալու համար այցի ամրագրումը և ամրագրված օրը սահմանված կարգով նույնականացման քարտ ստանալու մասին դիմումի ներկայացումը:»,

3) 7-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Օրենսգրքի 156.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացնելու՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասում «կողմից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 7-րդ բաժնում «նվազեցվող եկամուտ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նվազեցվող (չհարկվող) եկամուտ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 5. Օրենսգրքի 156-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի 2-րդ կետում «մարտի 2-ից» բառերից հետո լրացնել «(մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից)» բառերը, իսկ «(հայտարարագրեր)» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի» բառերը.

2) 4.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սույն պարբերության կիրառության իմաստով, եկամտային հարկի հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները: Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա այլ եկամուտների տեսակներ կամ շեմեր:»:

Հոդված 6. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 156.1-ին հոդված.

«Հոդված 156.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի)

Նախալրացումը և ներկայացված համարվելը

1. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

2. Հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնելու համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում:

3. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք կարող են Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում փոփոխել հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) և Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մարմին: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է ֆիզիկական անձի կողմից հաշվարկը (հայտարարագիրը) ստորագրելու օրվան նախորդող օրվա դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

4. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի կողմից Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը համարվում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:»:

Հոդված 7. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ընդ որում, սոցիալական ծախսը սույն մասի համաձայն փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձն օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը):»:

Հոդված 8. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում «հարկային մարմնում հաշվառման պարզեցված» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ինքնաշխատ եղանակով ՀՎՀՀ շնորհելու» բառերը:

Հոդված 9. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում «ներկայացրած» բառը փոխարինել «կողմից,

ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով ներկայացված» բառերով:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1) «ա» ենթակետով սահմանված՝ տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվելու դրույթը կիրառվում է 2024 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների համար,

2) «բ» ենթակետի գործողությունը տարածվում է 2024 թվականի և հետագա հաշվետու տարիների համար ներկայացվող եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) վրա:

3. 2024 թվականի հաշվետու տարվա համար հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 2026 թվականի մարտի 2-ից: Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք հնարավորություն ունեն հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) փոփոխել և Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Խ-1163-06.10.2025-SՀ-011/01

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Անկախ սույն հոդվածով սահմանված կարգավորումներից՝ Օրենսգրքի՝ համապատասխան հարկին կամ վճարին վերաբերող բաժիններով կարող են սահմանվել հարկային հաշվարկի և դրա կազմմանը վերաբերող առանձնահատկություններ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

4) 1-ին և 2-րդ մասերում «և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով,

5) 6-րդ մասը ~~ի երկրորդ նախադասությունը~~ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագրին) ու ներկայացնելու կամ եկամտային հարկը ու վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման և եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ու վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով~~

սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ»:

«6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ու ներկայացնելու կամ հարկը (վճարը) ու վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագիրն) ու ներկայացնելու կամ եկամտային հարկը ու վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման կամ եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ու վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Սույն մասի իմաստով նույնականացման քարտ ստանալու համար դիմել է համարվում նաև միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի թվային ծառայությունների հարթակի կամ բջջային հավելվածի միջոցով նույնականացման քարտ ստանալու համար այցի ամրագրումը և ամրագրված օրը սահմանված կարգով նույնականացման քարտ ստանալու մասին դիմումի ներկայացումը»:

6) 7-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Օրենսգրքի 156.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացնելու՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը»:

Հոդված 13. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասում «կողմից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 7-րդ բաժնում «նվազեցվող եկամուտ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նվազեցվող (չհարկվող) եկամուտ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 15. Օրենսգրքի 156-րդ հոդվածի՝

3) 4-րդ մասի 2-րդ կետում «մարտի 2-ից» բառերից հետո լրացնել «(մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից)» բառերը, իսկ «(հայտարարագրեր)» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի» բառերը.

4) 4.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր)»:

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սույն պարբերության կիրառության իմաստով, եկամտային հարկի հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգորդներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները: Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա այլ եկամուտների տեսակներ կամ շեմեր:»:

Հոդված 16. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 156.1-ին հոդված.

«Հոդված 156.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի)

նախալրացումը և ներկայացված համարվելը

5. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հ_____այտարարագիրը) նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

6. Հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնելու համար Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում:

7. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք կարող են Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում փոփոխել հարկային մարմնի նախալրացրած՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) և Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մար-

մին: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է ֆիզիկական անձի կողմից հաշվարկը (հայտարարագիրը) ստորագրելու օրվան նախորդող օրվա դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

8. Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի կողմից Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին չներկայացնելու դեպքում հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը համարվում է Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված: Սույն մասով սահմանված դեպքում հարկային մարմինը եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:»:

Հոդված 17. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ընդ որում, սոցիալական ծախսը սույն մասի համաձայն փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձը^{բն} օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիր):»:

Հոդված 18. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում «հարկային մարմնում հաշվառման պարզեցված» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ինքնաշխատ եղանակով ՀՎՀՀ շնորհելու» բառերը:

Հոդված 18. Հոդված 19. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում «ներկայացրած» բառը փոխարինել «կողմից, ինչպես նաև Օրենսգրքի 156.1-ին հոդվածով սահմանված կարգով ներկայացված» բառերով:

Հոդված 19. Հոդված 20. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

3) «ա» ենթակետով սահմանված՝ տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաղաբացի համարվելու դրույթը՝ կիրառվում է 2024 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների համար.

4) «բ» ենթակետի գործողությունը տարածվում է 2024 թվականի և հետագա հաշվետու տարիների համար ներկայացվող եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) վրա: Ի կիրառումը տարածվում է 2024 թվականի և հետագա հաշվետու տարիների վրա:

7. 2024 թվականի հաշվետու տարվա համար հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմինը ֆիզիկական անձանց համար հասանելի է դարձնում սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 2026 թվականի մարտի 2-ից: Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք հնարավորություն ունեն հարկային մարմնի նախալրացրած եկամտային

հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) փոփոխել և Օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ, իսկ 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ:

8. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՐԴ՝ Խ-1163-06.10.2025-SՀ-011/1) , «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՐԴ՝ Խ-1163.1-06.10.2025-SՀ-011/1) , «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՐԴ՝ Խ-1163.2-06.10.2025-SՀ-011/1) , «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՐՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՐԴ՝ Խ-1163.3-06.10.2025-SՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	Մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի ներկայացման և հարկի վճարման օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետները ֆիզիկական անձանց կողմից դիմելու սակայն նույնականացման քարտ չստանալու դեպքերում եկամտային հարկի տարեկան հաշվարկի ներկայացման և հարկի վճարման օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետները հետաձգելու որոշ հարցերի հստակեցման նպատակով առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ». «6. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու կամ հարկը (վճարը) ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկի տարեկան հաշվարկն (հայտարարագիրն) ուշ ներկայացնելու		
--	--	---	--	--

			կամ եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, հարկային հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման կամ եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց կողմից մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար դիմելու և մինչև նշյալ վերջնաժամկետը նույնականացման քարտ չստանալու դեպքում, եկամտային հարկը ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, եկամտային հարկի վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Սույն մասի իմաստով նույնականացման քարտ ստանալու համար դիմել է համարվում նաև միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի թվային ծառայությունների հարթակի կամ բջջային հավելվածի միջոցով նույնականացման քարտ ստանալու համար այցի ամրագրումը և ամրագրված օրը սահմանված կարգով		
--	--	--	--	--	--

			նույնականացման քարտ ստանալու մասին դիմումի ներկայացումը:»:		
2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետ	Ընտանիքի անդամների միջև փոխանցումները հայտարարագրման ենթակա չլինելու նպատակով առաջարկվում է՝ նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սույն պարբերության կիրառության իմաստով, եկամտային հարկի հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, ծնողները, քույրերը, եղբայրները, զավակները (որդեգրողներն ու որդեգրվածները), պապերը, տատերը և թոռները: Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա այլ եկամուտների տեսակներ կամ շեմեր:»:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր հոդված	Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց հարկ վճարողի հաշվառման համարները ինքնաշխատ եղանակով տրամադրվելու նպատակով առաջարկվում է նախագծում լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասում «հարկային մարմնում հաշվառման պարզեցված» բառերից հետո լրացնել «,	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում՝ նոր 8-րդ հոդված լրացնելու միջոցով:	Ընդունվել է:

			ինչպես նաև ինքնաշխատ եղանակով ՀՎՀՀ շնորհելու» բառերը:»:		
4.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի՝ 1) «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը հանել, 2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ 5) «ա» ենթակետով սահմանված՝ տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվելու դրույթը կիրառվում է 2024 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների համար, 6) «բ» ենթակետի գործողությունը տարածվում է 2024 թվականի և հետագա հաշվետու տարիների համար ներկայացվող եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) վրա:», 3) 4-րդ մասում «ենթաօրենսդրական ակտերն ընդունվում» բառերից հետո լրացնել «են» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է ուղղել օրենքի ընդունման օրը և նախագծի 1-ին հոդվածի առաջին պարբերությունում «2010 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-247» բառերը փոխարինել «2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-247-Ն» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում «հարկային օրենսգրքի.» բառերից հետո լրացնել չափերտ (»,)	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի՝ 1) առաջին պարբերությունում «6» թիվը հանել, 2) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7) եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց դեպքում նաև՝ ա. ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների, քույրերի, եղբայրների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների) վերաբերյալ տեղեկատվությունը, բ. հարկային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը, գ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված անձնական եկամուտների, այդ թվում՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և	Ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց վերաբերյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	տվյալները միայն ֆիզիկական անձի համաձայնությամբ հարկային մարմնին տրամադրելու, ինչպես նաև տվյալները տրամադրելու կարգի, փոխանցվող տեղեկությունների ձևաչափերի, ֆիզիկական անձի կողմից համաձայնության տրամադրման կարգի ու ձևերի, տեխնիկաձրագրային կանոնների հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասը լրացնել 5-րդ կետով. «5) ֆինանսական կազմակերպություններից:». 2) 2-րդ մասում՝ ա. «ռեեստրը վարողը,» բառերից հետո լրացել «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունները,» բառերը, բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունները տվյալները տրամադրում են միայն ֆիզիկական անձի համաձայնության դեպքում:», 3) 4-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն» «Տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների կողմից լիազոր մարմին տրամադրելու կարգը, փոխանցվող տեղեկությունների	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
--	--	---	---	--	--

			ձևաչափերը, ֆիզիկական անձի կողմից համաձայնության տրամադրման կարգն ու ձևերը, ինչպես նաև տեխնիկաձրագրային կանոնները սահմանվում են Կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով:»:		
9.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածում «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել « և օգտագործում է հարկային օրենսգրքով սահմանված կարգով ֆիզիկական անձանց եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) նախալրացման համար» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի՝ 1) «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերը հանել, 2) 2-րդ մասում «ենթաօրենսդրական ակտերն ընդունվում» բառերից հետո լրացնել «են» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
11.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169 ¹ -ին հոդվածի՝»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: